Հրեշտակներ և պատուհասներ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Մտորումներն այն պատուհասների մասին, որոնք Հովհաննեսը տեսավ Հայտնություն 16-ում, կարող են անհանգստացնել մեզ: Այնուամենայնիվ, մեծացնելով մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս՝ մենք կարող ենք հաղթահարել մեր անհանգստությունները: Կարևոր է նշել, որ երբ հրեշտակները թափում էին իրենց պատուհասները, նրանք վկայում էին Տիրոջ բնավորության մասին: Իմանալով Նրա բնավորությունը՝ կմեծացնենք մեր հավատքը Նրա հանդեպ:

Կարդացեք Հայտնություն 16.5 և 7 հատվածները և գտեք, թե ինչպես են հրեշտակները նկարագրել Տիրոջը և Նրա դատաստանները: Խոսքի պղպջակում գրեք, թե ըստ ձեզ, ինչ են ասում հրեշտակները:



- Մեզ համար ինչո՞ւ է օգտակար հասկանալ Տիրոջ բնավորությունը, երբ մենք իմանում ենք Նրա դատաստանների մասին:

- Ձեր կյանքում ե՞րբ է դա օգնել ձեզ հասկանալ, թե ինչպիսին է Աստված: Հիսուս Քրիստոսի բնավորությունը հիշելով՝ ինչպե՞ս կարող ենք ապավինել Նրան:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 2—Study Guide*-ի թարգմանությունը: Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.